


Handwritten text, possibly a signature or name, in cursive script.

891.99
hr-97

1908



DONATED TO THE
STATE LIBRARY OF ARMENIA

BY *Mrs. James W. Galt*
CITY *Waltham Mass*
U.S.A.

ԱԶՍՏ ՄԱՏԵՆԱԾՍԻՐ

Թիի 4

Վ Ա Ն Գ Ո Յ Ժ

Կ Ո Ւ Ժ Մ Ի Զ Ո Ւ Ր

Ի Ի Ր

ԱՅՐԱԾ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՎԵՐԱՅ

Կ Ը Ս Ր Ս Կ Է

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հ Ր Ա Ս Ա Ր Ա Կ Ի Զ

Վ. Ե. Պ. ԶԱՐԳԱՐԵԱՆ ԵՂՐԱՐԲ



Կ. ՊՈՂԻՍ

ՏՊԱԳՐ. Ե. ՍՍՏՏՈՒՐԵԱՆ

1908

19 NOV 2011

891-59

Խ- 97
այր.

ԱՋԱՏ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Թիւ 4

Վ Ա Ն Գ Ո Յ Ժ

Կ Ո Ւ Ժ Մ Ի Զ Ո Ւ Ր

Ի Ի Ր

Ա Յ Ր Ա Մ Հ Ա Յ Ր Ե Ն Ե Ա Ց Վ Ե Ր Ա Ց

Կ Ը Ս Ր Ս Կ Ե

Խ Ր Ի Մ Ե Ա Ն Հ Ա Յ Ր Ի Կ

6454
38

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Ջ

Վ. Ե. Պ. ԶՍԵՂԱՐԵԱՆ ԵՂՔԱՐԻՔ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳԲ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

1908



ԱՌ ՄԵՄԱՐՈՑ ՍԻՐԵԼԻԳ ԻՄ
ԱԲՐԱՀԱՄ ՍՕԼԱԽԵԱՆ
ՄՏԵՐԻՄ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ

Վան վառուեցաւ, որ իմ եւ ԲՈ ընկաւնունդ հայրե-
նիքն է. անուս մեր ազնիւ սիրսն եւս մեր կարեվիր արսին
հետք վեսահար եղած է :

Այդ քաղաքաւեր կրակին համար, որ անխնայ այրեց
լափեց մեր հայրենեաց կեանքը, ես մի կար ջուր պատրաս-
տեցի, չէր քե այրած ժողովուրդին մորմոտեալ արսին ջուր տա-
լու մտով՝ զի դորա համար գետեր եւ ծովեր պէտք են՝ այլ մի
միայն վանայ դպրասանց աղփատիկ մանուկներուն ծարաւն
ու պապակը զովացնելու համար :

Սոյն իմ արատուաց մի կաթիլ ջուրը ձեր բարեսիրտ ազ-
նուութեան կը յանձնեմ, որ զայն ձեր օգնական ջանքիւ ա-
ռասացնեմ, այսինքն մամուլին տալով հոգայք տպագրութեան
պէտքը, որոյ դուզնաբեայ արդիւնքն նուիրենք հետք մեր
հայրենեաց այն կարօտ մանուկներուն՝ որք այսօր անդպրոց,
անգիրք եւ անբուրք մնացին : Այս փոքրիկ բարոյական հացի
նկանակը մեք մատակարարեմք, զի մեր բաժինն է. իսկ հա-
նապազորդական հացն բողբոջմք բող Աստուած հոգայ, ոչ
միայն տղայոց այլ եւ հարցն ու մարց : Ո՛հ, հայրերը չա-
ւորութեամբ բուռուացան եւ արդ անմիտքար դառնու-
թեամբ կը հեծեծեն սան մեզ. գոնե զաւակներ մտիտարուին
դպրոցին տանարին մեզ : Ենն քաղաքի մի վաճառանոցի խա-
նութենք փակուեցան, չբողբոջմք որ դպրոցներն էլ փակուին,
մինչեւ յիշե Աստուած եւ այցելութիւն լինի տառապեալ ժո-
ղովուրդին :

ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Վ Ա Ն Գ Ո Յ Ժ

ԿՈՒԺ ՄԻ ԶՈՒՐ

ԱՌ ԻՄ ԱՅՐԱԾ ՀԱՅՐԵՆԻՔ

Եղէ ես որպէս բու յաւերակի :
ՍԱՂՄ. ՃԱ. 6 :

Ո՞ տայր ինձ, ո՛հ, գեղեցիկդ վան, վասպուրական
այլարհի զարդն ու պսակ, որ աւերակիդ անխ-
նացեալ միտքին վերայ նստելով՝ արժանի լինէի զքեզ
և քո որդիքներդ ողբալ, ինչպէս ողբախօս Երեմիանն,
որ լայր և կոծէր այրիամայր և գերեվարեալ Երուսա-
ղէմին վերայ :

Որդիքներդ գերեւ չը գնացին ի Բաբելոն, այլ նոյն
իսկ հայրենեաց երկրին ու գրկին մէջ աղքատու-
թեամբ ստրկացան ու գերեցան. հաց՝ որ նոցա կեան-
քըն էր, խլեցին զայն ու քանդեցին վաճառաշահու-
թեան ագարակն, և այժմ դու համակ որդիքներովդ
մնացիր նօթի և նուաղեալ :

Մի՛ լաք, դիտելի մանուկներ, մի՛ կոծէք, կա-
թընտու մայրեր, թէ հայն ու կաթ պակտեցա՞ւ մեր
երկնաւոր Հօր դուրս, որ ճնճուկներ կը հոգայ՝
ղձեզ չի մոռնար. շուտ կանցնին ձեր սոգոյ իրիկունն ու
դիչեր, և առաւօտ ուրախութիւն կողջունէք :

Պատահար քո՝ երկնից պատահար չէր, այլ նոյն
 իսկ քո երկրէն և քո մէջէն. հին դրացի քաղաքացի-
 ներդ դաւեցին զքեզ. նոքա՝ որ քեզ հետ կուտէին
 հայրենի սեղանէն, նոքա՝ որ քո ճակատին քրտանց
 վաստակով լիապէս կը յագենային, ո՛հ անխնայաբար
 ոտնակոխեցին բարելից հացի սեղանդ:

Այսուհետեւ զարդիւնս ձեռաց իւրեանց կերիցեն:

Ես գիտեմ, հաց՝ քո զօրութիւն և հոգին էր, և
 այն իսկ էր միայն որ յառաջադիմութեանդ զօրավիզ
 կը լինէր և դու կը քայլէիր այնչափ, որչափ մանուկ
 մի նոր ոտք ելած: Արդեօք տնակից եղբայրներդ
 նախանձեցա՞ն, հացն ու վաստակ ձեռքէդ կորզեցին,
 որպէս զի դու առ քաղցի ուժաթափիս, ոգիդ և ջի-
 զերդ թուլնան, ծունկերդ կթոտին, և այլ եւս չկա-
 րենաս յառաջադիմել դէպ ի յուսոյն ասպարէզ և
 լաւագոյն կեանք:

Բայց ի՞նչ էր քո դուզնաքեայ յառաջադիմութիւն,
 ես գիտեմ ու կը ճանաչեմ զքեզ. որդիքներուդ կէս
 մասն պանդխտութեան մէջ մաշելով կը մաշին, կէս
 մասն եւս այդք բիր զրկանօք հանդերձ հազիւ կը
 հայթայթեն իւրեանց ապրուստն ու պարէն. միթէ
 առ ա՞յդ եւս մախացաւ երիցագոյն եղբայրդ և հին
 ու մուրք քաղաքականութեան դատաստանով վրասա-
 կա՞ր համարեց:

Եթէ այսպէ՛ս, արսո՛ս, նա քան զքեզ առաւել
 տուժեց ու չկրցաւ խորհրդով խելամոեւ, որ քո կար-
 ծեցեալ յառաջդիմութիւնդ երկրին ընդհանուր բար-
 դաւածման անխորապէս շահ և օգտակար էր:

Եթէ յիրաւի՛ և իրապէս յառաջդիմութեանդ քայ-
 լերը հաստատուն և զօրաւոր էին, այդ իսկ մեծ շահ
 էր անչարժ և անաշխատ եղբորդ. զի դու զայն եւս
 մղելով մղելով յառաջ կը տանէիր հետ քեզ, և իբ-
 րեւ երկու լծակից ամոններ հաւասար վաստակելով,
 հաւասար բաժնելով հայրենեաց ազարակին արդիւն-
 քը, այնուհետեւ հաւասար կը վայելէիք ի փառս Օս-
 մանեան կայսրութեան:

Ո՛վ տիրասէր և ժրպան Հայ մշակներ, հայրենեաց
 ազարակին մէջ այն ինչ միամտութեամբ կաշխատէիք
 բեղմնաւոր հունձերով երկիրը բարեչէն պահել և տի-
 րով յտեմարանը գանձով ու ցօրենով լեցնել, անտի-
 րասէր ծառայակիցներ հրձիգ արարին ազարակն,
 խելաթափ եղեն ու չմտաբերեցին թէ այդ ոճիրն ար-
 քունի գանձուն և բոլոր հայրենակից ժողովրդոց հա-
 ւասար դեան է:

Ո՛վ չի գիտեր, որ երկրի մը բռնութենէն և զըր-
 կանքէն միապէս կը զրկուի բնակիչ ժողովուրդ, և կը
 թշուառանան առհասարակ սովու և տառապանաց մէջ.
 Ղուրանի և Աւետարանի որդիքներն՝ երկու դասն ի
 միասին պիտի նստին ու լան, մէկ դասն արեւուն տակ
 և միւսն գիշերափար լուսնին, հա՛ց հա՛ց աղաղակեն:

Միթէ նա որ յափշտակեց ընկերին հաց, նա կո՛չտ
 պիտի ուտէ: Ո՛չ, ո՛չ. զրկանաց ու յափշտակութեան
 հաց առաւօտէն մինչեւ իրիկուն չի տեւեր, շուտով
 կը սպառի. զի այն հացն է միայն արդար ու անսպառ՝
 որ մարդոց ճակատին քրտանց՝ արդար վաստակն է.

ով որ առանց այս պայմանին հաց կուտէ աշխարհիս վրայ՝ պետական Աստուծոյն վճիռը կեղծանէ :

Չը գիտեմք քո մեղքն ի՞նչ էր, ո՛վ անգէն և հլու հնազանդ ժողովուրդ վանայ, դու ոչ զէնք ունէիր և ոչ երբէք քրքոստացար տիրող գաւազանին դէմ. քո հաւատարմութեան չափ հինգ հարիւր տարի է, և քո զէնք միայն խօփն ու սրօր. արուեստ և վաճառականութիւն քո զբաղումն էր. և միթէ ա՞յս եղել հատուցումն քո հաւատարիմ հպատակութեան :

Ի՞նչ խորհրդաւոր օր էր հրափորձութեանդ օր, ով անբախդ վան. միթէ այն օր քեզ համար սև օր էր, երբ Թուրքաստանի պայծառ օր կսկսէր, երբ Բիւզանդիոնի վասիօրէն հրանօթներ կորոտային, և Օսմանեան միապետ ինքնակալ կայսր սահմանադրութիւն կը կնքէր. այն ուրախ օրերում, ո՞հ, մոլեգնութեան հուրն զքեզ լափեց, ծուխով ու մուխով խեղդեց քո խնդրութեան ձայն և շունչ :

Մինչդեռ մայրաքաղաքն իւր համայն գաւառներով հրավառութեան տօն կը կատարէր, դու հէք ապերջանիք վան, քո տօն հրավառութիւն չէր. այլ ծախիչ ու համաճարակ կրակ մի, որ մի գիշերուան մէջ սպառեց զքեզ. այս Բիւզանդիոնին մէջ պանդուխտ գաւազներդ երգոց ու նուագարանաց ձայներով կը պարէին, իսկ այդք բոցերուդ ճարճատիւն միայն կը լուէր, որոց հետ կը խառնուէր նաեւ թշուառ որդիքներուդ ողբ, կոծ, լացն ու աղաղակ :

Ծոփն քեզ մօտ էր, ջրոց աղբիւրներ և վտակներ կը վազէին. կարաւմեռն էր, Թանձր ձիւնի ճերմակ սաւանով պատած էիր, շէն քերդ ամէն հողակառոյց էին, մարդ կը զարմանայ, թէ որպիսի դիւրութեամբ վառեց զքեզ կրակ :

Այդ մի հրաշք է աշխարհի առաջ. ե՞րբ հուրն զհող վառեց, ո՞վ լսեց ու տեսաւ որ վանայ շէնքերն հըրդեհէն վառին. թէ գիտէք՝ դո՛ւք պատմեցէք մեզ, ո՞ հարիւրամեայ ծերունիք, դուք դեռ ողջ էք և կապրիք այսօր, վկայեցէք երկրիս դատաւորաց առաջ :

Թուրքաստանի վերանորոգ սահմանադրութեան տօնին անշուշտ զո՞հ մի պէտք էր, և այն փառաւոր զո՞հ դու մատուցիր, ժողովուրդ Հայոց. բայց գիտցիր թէ կանխաւ քան զքեզ շատ զոհեր զոհուեցան այլ և այլ ժողովրդոց և պատերազմի դաշտերուն մէջ :

Եթէ այլքն այնպէս դատեն, որ քո զոհն անարիւն և դուզնաքեայ էր, սակայն ես կասեմ քո զոհն արիւն և կեանք կազմող զօրութիւնն էր. ո՞հ, նշտրակով բոլոր մարմնոյդ երակները բացին. թոյլ տուին որ դու այնուհետեւ տակաւ տակաւ մեռանիս չարաշուք աղքատութեան մէջ. և քո երակահատներ չքմեղս լինելով՝ աշխարհի առաջ ձեռքերնին լուանան և ասեն. «Քաւեալ եմք մեք յարենէ դորա» :

Ողորմի՛մ քեզ, ժողովուրդ Հայոց, ողորմի՛մ. արդեօք լաւագոյն չէ՞ր քեզ, որ միանգամ մեռնէիր և կնքուէր քո հանգստեան գերեզման և դու երթայիր դադարէիր առ հարս քո, քան թէ այսպէս ի գետին

Թախանալով արիւնացամաք մեռնիս : Ո՛հ , մինչեւ երբ անսամ քեզ , որ ինքնազոհ մեռնիլ սորվիս . աշխարհ սորվեցաւ այդ դասը , իւր մրցանակն առաւ , դու դեռ անուս մանուկ մնացիր :

Քո բախտն և քո յատկական առաքինութիւն այդպէս է , որ դու այդ օրինակ մեռնիս . ուրեմն փառք տուր երկնից ու մխիթարուիր . դու եւս ելիր այն զբրկեայ արդարոյն պէս աւերակիդ աղբիւսին վերայ նստիր . ոչինչ տրտունջ կամ բարկութեան բան մի՛ խօսիր երկնից դէմ . ասա , « Կամք Տեառն օրհնեալ եղիցի . Տէր ետ և Տէր էառ » : Հանդուրժէ հարուածներուդ , թող այդ եւս քո անցեալ բիւրաւոր զոհերուդ հետ խառնուի :

Գիտեմ , մխիթարութիւն և սիրովանք դառնացեալ սրտիդ խոցերն ու վէրքերը չեն բուժեր , զի խիտ անօրինակ և դժնդակ դէպք էր որ քեզ դիպեցաւ այս ժամանակին մէջ , զոր քաղաքակրթութեան դար կը կոչեմք , և այն յուսալից օրերը , երբ Օսմանեան կայսրութեան նոր թուականն կսկսէր և երկրին շինութեան հիմն կը դրուէր , ո՛հ , այն օրերը դու քանդուեցար :

Այո՛ , այ՛ օրերը , երբ լահմանագիր օրէնք պարտք և իրաւունք կը քարոզէր , հաւասարութիւն կուտայր , քո զրկանք և հարստահարութիւն աւելի եւս ծանրացաւ , երբ այլ և այլ կրօնի տարանջատ որդիքներն ձեռք ձեռքի տալով միազգութեան դաշնակցութիւն և ուխտ կը կնքուէր մայրաքաղաքին մէջ . Վանտոսպ ըմբոստացաւ յանկարծ , խլեց այս նոր դաշնակցութեան կապը , երիցագոյն եղբայր կրտսերին վերայ յառնելով կոպաններ զայն :

Միթէ նա հին օրտմտութիւն ունէր սրտին մէջ , որ մոռցաւ ժամանակին վերահաս տագնապն , չարար պատիւ խորհրդական ծերերուն՝ որ կայսերական քաղաքին խորհրդարանին մէջ գիշեր ու ցօրեկ երկրին խաղաղութեան համար կը հոգային կը խորհէին հնարից ելք մի գտնել , և ազատել երկիրը իւր վերահաս վտանգէն :

Ո՛վ Գուրա՛ն Գուրա՛ն , ես չեմ հաւատար այնպէս ինչպէս կը հաւատան ոմանք քո դպիրներէն , թէ դու քեզ հաւատացող որդիքներուն օրհնակէս հրաման կուտաս որ Աւետարանի աղքատ որդիքներուն ձեռքէն հացը յափշտակեն , ստրուկ ճանչնան , կեանքէն զրկեն . եթէ մեռցնեն՝ այդ եւս զոհ և արդարութիւն համարին , միով բանիւ միշտ բռնաւորութեան գաւազանով ջախջախեն դիրենք :

Ես չգիտեմ թէ ջախջախելով ջախջախելով ինչ շահեցան քո որդիքները . Այդ հաշիւը տեսաւ կայսրութիւն և մեզ յայտնի է այսօր . որ Թուրքաստանի ժողովուրդ ամէն կրօնի ազգերը առ հասարակ ջախջախուեցան քաղաքակրթութեան առաջ . սուտ է թէ ասեմ՝ օտարին ձեռք զմեզ ջախջախեց : Ո՛չ , ո՛չ , մեք զմեզ անդիտարար ջախջախեցինք և արդ փչուր փչուր եղանք :

Քա՛ւ թէ թշնամագիր ոգւով կը գրեմ և կը խօսեմ , ես Թուրքաստանի աշխարհին մի Հայ զաւակն եմ , և ի մանկութենէ անտի երկրին յառաջադիմութեան միշտ սիրահար . հաւատարմութեան կնիք միշտ անեղծ պահեր եմ ճակատիս վերայ . և առ այս վկայ կը կու-

չեմ հազար ութ հարիւր վաթսուն և երկու թուականը , յորում կովկասի լեռանց վերայ քո փառք և քո ներողամիտ մեծանձնութիւն կը հրատարակէի :

Հինգ ամբողջ դար է որ Հայն հետ քեզ կապրի և երկրիդ արդիւնաբեր մշակութեան համար քո հաւատարիմ և լծատար եզն է . դու տեսա՞ր երբէք , որ Հայն ընդվզեցաւ իւր կենաց մէջ , կամ եղջիւր ածեց կարծրակուռ խարազանիդ դէմ , որով դու նորա թիկանց կաշին հարուածելով հարուածելով շերտ շերտ հանիր , տակաւին Հայն միշտ անմռունչ մնաց քո առաջ , քո լուծր միամտութեամբ կրեց և ոչ մի անգամ մտաբերեց որ թօթափէ իւր պարանոցէն , զի հետ քեզ հաւատարմութիւն ուխտեր է :

Նախատեսէ՛ , նախատեսէ՛ , ո՛վ Թուրքաստան , սուրն ու գանակ քաղաքակրթութեան պատենին մէջ դիր , գիտցիր եթէ ջանաս միշտ քո վաստակաւոր եզն իւր վարած ակօսին մէջ մորթել՝ ի՞նչ կը լինի այնուհետեւ քո շահն , ոչինչ , միայն միսն ու կաշին . և յայնժամ դու անագան ուրեմն կուշաբերիս . և աւա՞ղ , կը տեսնաս որ երկիրդ անմշակ մնացեր է , հացին ու գանձին ոռոյր կը տիրէ , երկրին զաւակներ քաղցած կը մնան : Ծանի՛ր ուրեմն ծանի՛ր , այդ ժրագործ եզին չահարեր արդիւնքը , փոխանակ աղաղուն պահելոյ՝ դարման տար ու պարարտ պահէ զայն , որ իւր ուժով կարենայ վարել քո խորհացեալ երկիրը :

Ո՛վ սուրբ հաւատարմութիւն , ո՛վ պայծառ աստղ , որ կը փայլիս Հայու ճակատին վրայ . չգիտեմ , քո պայման , քո չափ և քո սահման մինչեւ ո՞ւր է , և Հայն

իւր հաւատարմութեան վարձն ու պսակը ե՞րբ պիտի ընդունի : Եթէ այսպէս դու անվարձ անպսակ մնաս և մերթ ևս փոխանակ վարձուցդ ծանր ծանր հարստահարուիս , ուրեմն այդ քո առաքինութիւն ի զուր և ընդունայն է աշխարհիս առաջ :

Դու գիտե՞ս , ով հաւատարիմ ժողովուրդ Հայոց , մարդիկ և ազգեր կան , որ քո այնչափ հաւատարմութիւնդ կը ծաղրեն ու կը մեղադրեն զքեզ . երբ կը տեսնան որ խիստ անմռունչ և անզգայ կը լինիս հաւատարմութեանդ մէջ , մինչեւ անչունչ անբարբառ դիակ մի կը դառնաս դու , այնպէս որ պարկեշտութիւնդ կը նշաւակեն և կոխկռտելով կանցնին վերայէդ , և դու չես իմանար : Իթէ գռեհաց կա՞ւ ես դու աշխարհիս երես , ես էլ կը դատիմ զքեզ թէ այդչափ ստրկանաս և աղարտես մարդկութեան ազատ պատիւ :

Սակայն դուք մի վհատիք , Աւետարանի հարուածեալ որդիքներ . յոյս առ ու քաջալերուէ , ժողովուրդ Հայոց , երկհազար ամ է որ միշտ կը ջախջախուիս ու չես մեռնիր . Պարսիկ , Յոյն , Արաբացին և կովկասեան բարբարոս ազգերը միշտ արշաւեցին ու քանդեցին քո հայրենիք . բայց դու անվկանդ՝ անյուսահատ տոկացող ոգի մի ունիս , որով կապրիս ու կը մնաս մինչեւ ցայսօր :

« Հաւատք քո կեցուցին զքեզ » , ասաց Քրիստոս , ուրեմն հաւատա , որ երկնից Նախախնամութիւն արդար և բարերար է . քո սերմն ու արմատ պիտի պահէ այդ բնիկ հողին մէջ , որ քո հայրենատուր ժառանգութիւն է . ընդունայն կը ճզնին այն ձեռք , որ կաշխատին զքեզ արմատախիլ առնել :

Ելէ՛ք ուրեմն, մի՛ նստիք և յուսահատ ողբաք այդ ապագոյժ աւերակաց վերայ . ելէ՛ք, Վանեցիք, Թաղեցէք այդ մեռելը, վրան կոթող մի կանգնեցէք ու գրեցէք այս յիշատակարանը . « ԱՍՏ ԹԱՂԵՑԱԻ ՎԱՆԵՑԻ շԱՅ ԺՈՂՈՎՐԴՈՑ ԳԱՆՁՆ ՈՒ ԿԵԱՆՔ » :

Այդ անյարիր մեռելին սգոյ հանդէսը կատարելէն .ետոյ, ելէ՛ք դարձեալ առէք բահն ու բրիչ, հորդեցէք պեղեցէք ձեր աւերակները , դուք ձեզ համար ճարտարապետ եղիք, հիմը գրէք և շինեցէք ձեր աւերեալ տունն ու քաղաք . անցեալն էանց այլեւս չի դառնար . ձեր դասն և իրաւունք թէ մոռանան աշխարհիս դատաւորներ , թողէք յայնժամ թող Աստուած տեսնայ :

Ո՛ւմ կայք և ո՛ւմ կըսպասէք այժմիկ, ձեր արտասուահոս աչքը դէպ յերկինս դարձուցէք . « Օգնութիւն ձեզ ի Տեառնէ եկեսցէ » : Հայոց աշխարհի աւերակները շատ են, իւրաքանչիւր դաւառացին, քաղաքացին և գիւղացին թող իւր աւերակները շինէ, և դուք զձերն :

Գիտե՛մ չբաւորեցաւ ձեր ձեռք , ո՛հ , զոր այժմ կարկառելով այտի միայն հաց կը խնդրէք . գիտե՛մ, թէ քանի՞ գժուարին է կրկին կանգնել ձեր վաճառաչահութեան շէնքեր և նոր գրամագլուխ հաստատել . զոր երեսուն , յիսուն տարուան միջոց հազիւ ուրեմն հաստատած էիք :

Ձեզ ասե՛մ, ձեզ ասե՛մ, Վասպուրական երկրի գիւղական ժողովուրդք , ձեզ յորդոր կարգամ, ձեր ա-

ռաքինութեան ժամն է ահաւասիկ . Վան քաղաք ձեր նեղութեան ապաստանարան էր, դուք ամեն անձկութեան մէջ քաղաքացւոց կը դիմէիք . իսկ այժմ նոքա ձեզ կը դիմեն, զի աշխարհիս շրջանն այսպէս կը դառնայ : Տուէք ուրեմն ինչ որ ունիք . փոխարինեցէք սիրով մինչեւ կազդուրի քաղաքացւոյն ուժը , գիտցէք ձեր թեւ ու թիկունք քաղաքացին է . հասէք յօգնութիւն , որ ձեր կենսական ուժը զօրանայ դարձեալ և իսպառ չը չլատի :

Իսկ դուք , անկեալ քաղաքացիք , դուք առաւել պէտք է ձեռն տաք միմեանց , որ ի միասին յոտին կանգնիք . ահաւասիկ է ձեր առաքինութեան ժամ , ընկերսիրութեան ժամ , Գրիստոնէական եղբայրսիրութեան ժամ , անձնանուէր բարեկամութեան ժամ , միաբան հողուով ու շնչով գործելոյ ժամ , ճշմարտութիւնը բարձրաբարբառ խօսելոյ ժամ : Խօսեցէք, վկայեցէք , մի՛ երկնչիք , խօսեցէք ու հաւատացէք որ ճշմարտութիւն պիտի ազատէ զձեզ :

Միանգամ ելիք ու մտաք այդ խաչակրութեան ասպարէզը . դուք քրիստոնէութեան արժանաւոր որդիքներ կը լինիք, թէ անտրտունջ ողուով տանիք այդ խաչերը . կարդացէք պատմութիւն , յիշեցէք ձեր անմահ առաքինի նախնիքն ու պապերը , որոց գլխէն այդ անցքերը շատ անցան արիւնով ու մահով հանդերձ :

Թէ յիրաւի՛ ձեր արիական նախնեաց նմանող հարազատ որդիքներն էք, այս հրոյ ու սրոյ ժամանակին մէջ ցուցէք ձեր առաքինութեան հանդէսը, զօրացէք ու զօրացուցէք վհատած որդիները, նկուն մի՛ լինիք

փորձութեան առաջ՝ զի մարդուն կենաց ճանապարհ
այս աշխարհիս վերայ լի է դժնդակ փոռչերով։ Առա-
քինիք միայն զայն կոխելով կանցնին, իսկ վատա-
սիրտներ կը լքանին։

Կոխեցէք և անցէք, ո՛վ աշխատաւոր եզինք, մի՛
թափառիք ու հեռանաք ձեր աւերակ ազարակէն,
ելէք դարձեալ զոյգ զոյգ լծուեցէք։ ձեր սամատիք
պինդ կապեցէք ընկերական սիրով, հեծելով փնջա-
լով վարեցէք ու պատռեցէք այդ տառապանաց ակօ-
սըն։ Ժիր մշակներ, գողնոց կապեցէք, լի յուսով ցա-
նեցէք ձեր վաստակասէր քրտանց սերմն։ պահ մի
եւս սպասեցէք, զի ձմեռ է, ձիւն և սառնամանիք
ծածկեր են մեր աշխարհ։

Գարուն մօտ է, Հայոց աշխարհ, և պիտի գայ ծիծեռ-
նակ քեզ աւետիս տայ, թէ Թուրքիոյ աշխարհին երկունք
կանցնի և իւր վերածնութեան օրը հասած է, և դու տես
յայնժամ թէ ինչպէս այդ մոխրակոյտ ազարակն անդրէն
բողբոջելով կը կանաչի, և քո վերջին բարգաւաճ կը լինի
քան զառաջին։

Դու լոյս և արեւ կը սիրես, ժողովուրդ. լոյս և արեւ
զքեզ պիտի վերածնին, քո հրայրեաց երկիր մարգագետին
կը դառնայ. լուսին ի վերուստ վերայդ անցնելով պիտի
զարմացմամբ հայի երբ տեսնայ, որ Արծրունեան աշխարհի
որդիքներ համակ արծուպէս նորափետուր զարդարուած են,
զոր բռնութիւն փետտեց որ լերկամարմին անպատանք մեռնին։

Կերպան և չուխայն և պէսպէս Եւրոպիոյ զարդեր հանին
քեզմէ, ժողովուրդ, մի շուարիք թէ դու մերկ անպատուաբար
պիտի մնաս. այդ քեզ թող մի բարի խրատ լինի, խելաբերէ

այսուհետեւ, կեանքիդ անտեսութեան դասերդ լաւ սորվիր.
վաղուց մոռցած էիր, բարակաման կտաւներ կը հագնէիր,
յիշէ այժմիկ քո հաստ կտաւն ու խամաքին։

Շո՛ւտ արա, շուտ արա, հին կտաւագործութեան հորերդ
բաց. Հայոց տիկնայք, ճախրակ մանեցէք, թել հասուցէք.
և դուք այրեր, կտաւ գործեցէք. կարմիր կապոյտ ներկեցէք.
վա՛շ, ի՛նչ վայելուչ է, եթէ դուք ձեր աշխատութեան պարզ
ձեռագործներ հագնիք որ շատ տոկուն է և շահաբեր, և
միանգամայն կը ջեռուցանէ ձեր բաց կուրծքեր և քրտնած
թիկունք։

Տէ՛ր ապաւէն մեր, զքեզ կը յիշեմք միայն մեր նեղու-
թեան մէջ, դու ես միակ անկեալ ժողովուրդոց խնամակալ
հայր, ի՛նչ է մահկանացու մարդոյն գրիչ և լեզուն, որ կա-
րենայ մխիթարել քո վշտահար ժողովուրդդ. և ի՛նչ է մար-
դոյն ապիկար ձեռք, որ կարենայ բառնալ հարստահարեալ
ղաւակներուդ բազմապատիկ ազէտները։ Բա՛րձ, Տէր, բա՛րձ,
այլեւս բաւական է քեզ՝ հաւատացող ժողովուրդին տառա-
պանք և Հայկայ տան աւերումն. վերաչինէ մեր քանդուած
աշխարհ և մեր փլած տունը. եթէ դու չը շինես՝ ի՛նչանիր
վաստակին շինողներ։

Տէր բարձրեալ և անարկու, դու կը հայիս և կը տեսնաս
երկնից պետական աթոռէդ, որ երբ ստրկացած ազգեր կու-
լան քո առաջ, ինչպէս կուլայ կարօտ մանուկ իւր ծնողաց
առաջ, աշխարհիս ազատ և հզօրացեալ ազգեր կայպանեն
ծաղր ու կատակ կառնեն զմեզ, երբ մեք մեր զրկանաց դա-
տաստան և իրաւունք միշտ քեզ կը թողումք գիտնալով որ
անօգնական ազգին՝ միակ ապաւէն և զօրութիւն դու ես։

Ատոռուած մարդասէր, մեր գթած Սամարացին դու ես,
մարդոց այս անխնայ դատաստանէն զմեզ ազատէ. որք

Նրիքովի ճանապարհի վերայ ինկած վիրաւորը կը տեսնան, և գիտեն իսկ, որ նա ինքնին անյարիր է, դարձեալ զանց կառնեն, մին կասէ, ինչ շահ ունիմ ես որ ձէթ և դինի ածելով վէրքերդ պատեմ, և մըւն՝ թէ ինչ վարձ կուտաս, որ զքեզ բառնամ տանիմ մինչեւ ազատավայր պանդոկ, ուր դարման տանելով քեզ ողջնաս և նոր կեանք ստանաս աշխարհիս վերայ:

Այսպէս անկարեկիր են մարդիկ, ո՛վ Տէր, առանց պայմանի մեր վէրքերուն զեղ և դարման չեն դներ, և առանց փրկանաց զին խնդրելոյ զմեզ չեն փրկեր, սորա համար Դաւիթ իւր ժողովուրդին խրատ կուտար. «Մի յուսայք յիշխանս որդիս մարդկան, զի ոչ գոյ ի փրկութիւն ի նոսա»:

Ես կը լուեմ, Տէր, թող այրած ժողովուրդին հեծեծանքն միայն առ քեզ հասնի, բայց ինչպէս լուեմ. թէ լուեմ ես, Վասպուրականի քարեր կազազակեն, երկու թիւր ժողովրդոց աչքովկայ են այս ճշգրիտ իրողութեան, թէ աշխարհիս իշխանութեան դատաւորներ այս վկայութիւն չընդունին, այնուհետեւ դատ և դատաստան քեզ կը մնայ, ո՛վ իրաւարար Տէր:

Մամո՛ւլ, մամո՛ւլ, որ քան զարծիւ արագաթեւ ես, ա՛՛ո և տար մորմոքող սրտիս ցաւն ու հառաչանք և աչքիս աղէջուր կաթիլները, տար ցողէ այն իմ այրած Հայրենեաց փոշիացեալ աւերակներուն վերայ, ցողէ վառուած ու մրկած սեւ սիրտերուն վերայ:

Գիտե՛մ, գիտե՛մ, այս իմ հեռաւոր նժդեհութեան վայրէս զքեզ լալ միայն հերիք չէ, ո՛վ իմ բնականունդ Հայրենի՛ք, ո՛վ իմ խանձեալ խանձարուր. զա՛մ զա՛մ և քեզ հետ կական բառնամ, մոխրակուտիդ վերայ ողբանուէր նստելով զքեզ ողջադուրեկով լամ:



ԱԶԱՏ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Սոյն շարքէն հրատարակուած են ցարդ՝

- | | |
|---|-------|
| 1. — Սել հողեր կամ յետին գիշեր Արարատ-
եան, բասերգուքիւն Պետրոս Դուրեանի | 2, 50 |
| 2. — Աւերակ (բանսի յիշատակներ) Վահան
Թորովեց | 1 |
| 3. — Ընդարձակ հայկական երգարան Ա. հասոր | 3, 50 |
| 4. — Վանգոյժ Խրիմեան Հայրիկի | 1, 50 |

*Չարդարեան եղբայրներու գրատան մէջ մեծաքա-
նակ և փոքրաքանակ կը վաճառուին հետեւեալ ազատ
հրատարակութիւնները .*

- | | |
|---|--------|
| Փրկիչներ, բասերգուքիւն Առանձարի | 6 |
| Վեսի ծիծաղը (պատմութիւններ) » | 12, 50 |
| Կարմիր օրեր | 6, 25 |
| Փնուքեան օճախ | 8 |
| Քրիզանթեմ, Մ. Պարսամեան | 4 |
| Վեղարաւոր Սասանան, Ե. Արմէն | 1 |
| Թիսպարսք վեպ, Ա. Շիսանեան, 2 հատոր | 15 |
| Կարիպ ախպեր, » | 5 |
| Հայրենիքի զոհեր, վեպ | 7, 50 |
| Նեսա, բարգ. Պուլկարեհեհե | 2, 50 |
| Թուրք քերորի օրերէն, Օ. ԶիՖրե-ՍարաՅ | 1, 50 |
| Զննաններ Կ. Բարդամեան | 10 |
| Մինաս Չերազի մեծադիր պատկերը | 2 |
| Հայորդիները Ա. և Բ. Շարք | 5 |
| » Գ. » | 5 |
| Լեւոն Ե. Լուսինեան, Կ. Բասմանեան | 47, 50 |

Նաեւ մեծանուն վիպագիր Ռաֆֆիի հետեւեալ երկերը .

- | | |
|--|----|
| Զալայեղին | 6 |
| Խենթը և Նալայեղսին | 24 |
| Սամուել | 36 |
| Դաւիթ բեկ | 36 |
| Կայծեր Ա. հատոր | 24 |
| » Բ. » և վերջ | 36 |
| Խաչագողի յիշատակարանը | 24 |
| Խամսայի մելիքութիւններ, Վարապաղի աստ-
ղագէս | 24 |
| Ոսկի ափաղաղը | 12 |

ՀԱՍՅԷ — Կ. Պոլիս Զախախտար 24—26
Զարդարեան գրատուն



34971